

րեցաւ զղջման Բողոքակոչութեամբ լատին եպիսկոպոսի ներքուլթիւնն խնդրել և յետոյ Մասնաժողով կազմուեցաւ ի Զմիւռնիա լատին եպիսկոպոսի նախադասութեամբ: Հրաւիրուեցան բոլոր տաճկահայատակ հռովմէադաւաններն որոշելու համար թէ ո՞չք են, որոնք կուզեն ըստ մարմնաւորին Պուկաս վարդապետի առաջնորդութեան հպատակել: Քանզի ըստ հոգեւորին արդէն ամենքն լատին եպիսկոպոսի իրաւասութեան ներքոյ են:

Մասնաժողովի արդիւնքն շատ աննպաստ եղաւ Մխիթարեան Միաբանից: Քանզի հազիւ թէ քանի մի ընտանիքներ և մասնաւոր վաճառականներ (վերջին ժամանակներս Հարկէն, Գաղատիայէն և այլ տեղերէ գաղթած) յօժարեցան Տերտերեանի առաջնորդութեամբ կարգաւորել Կառավարութեան հետ ունեցած խնդիրներն: Իսկ մնացեալ քանի մի հարիւր տուն նախկին դաղթականներն մնացին վերստին լատին եպիսկոպոսի իրաւասութեան ներքոյ: որ իւր կողմէն տաճկահայատակ աշխարհական ոմն փոխանորդ կարգելով՝ նորա ձեռքով կը կարգադրէ Կառավարական խնդիրներն: Ինչպէս են Զինուորական արոց բաշխումն և հաւաքումն կարուածական վճարներն և այլն և այլն: Զմիւռնիոյ Ս. Պողոսկարպոս եկեղեցին ժամանակին շինած են Հայ գաղթականք և ապա նոյն եկեղեցւոյն տիրած են լատինք: Չնշած են պատկերներու վրայէն հայերէն գրերն, թէև տակաւին եկեղեցւոյ մօտ կը գտնուին Հայ գրերով գերեզմաններ: Ո սկզբան Հռովմէական քահանայք Հայ լեզուաւ պատարագած են, բայց յետ ժամանակաց՝ արտաքսած են Հայերէնն և այժմ՝ այն իսկ Մխիթարեան Միաբանք մասնաւոր եկեղեցի չունին, այլ ժամերգութիւն կը կատարեն իրենց դպրոցին կից՝ մատարան մէջ:

Հ Ո Վ Ի Ի .



# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Շ Ա Ր Ա Կ Ա Ն



Նշ անուն էր կրում ի հրնունմ՝ գերազանց կերպով Աստուծոյ անսահման մեծութեան և մարդուս փոքրկութեան վերայ ճառող այն գեղեցիկ մատենանր, որին այժմ կոչում ենք Շաւալան, կամ ի նշ անուններ ունէին ի հնունմ՝ Աստուծոյ անկշռելի բարերարութիւննր, Հայ եկեղեցւոյ աստուածապաշտութեան խորին խորհուրդները և գիտութիւնները և մարդուս հոգեւոր բաղձանքները իրենց մէջ ամփոփող այն սրաառուչ երգերը, որոց այժմ դարձեալ անուանում ենք Շաւալան: Միով բանիւ երբ նոքա աշխարհեկան և եկեղեցւոյ գիրկն ընկան, ի նշ անուններ ունէին: Ահա ուշադրութեան արժանի մի հարց, որը զանազան դարերի կարգով ստուգուում և լուծուում է այսպէս:

Հինգերորդ դարում երբ պարսից Յազկերտ թագաւորի հրովարտակի համաձայն զանազան քրիստոնեայ ազգերի դիտարկեաներ իրենց կրտրիժ այրուծիով Պարսկաստանում խմբուում են Յազկերտի արքունիքի առաջ և առաջին անգամ այնտեղ միայն լսում հաւատափոխութեան այս դժնդակ լուրը Յազկերտի բերանից, որ յոտորտարով ասում է նա իւր չարասէր խորհրդապահներին, — « Հարցեք, քննեցեք, տեսեք, թող որ լաւն է, ընտրեալ կայցուք »<sup>1</sup>, ուստի այդ քրիստոնեայ ամբոխը Յազկերտին մի կերպով յուշ առնելու, հասկացնելու համար, թէ հաւատի ընտրութեան մասին

1) Եղիշէ Երկրորդ Յեղանակ, 2) Նոյն.

ի զուր են հարցուփորձ, ի զուր են քննութիւնս վասն որոյ և մի կերպով նրա ականջին իրենց անդրդուելի հաւասար ձայնը հասցնելու համար) ի նշան իրենց սրբազան հաւասար և ի պատասխանի նրա մահաթոյն խօսքերին, գրում է պերճախօսն Նղիշէ, — «Սկսան այնուհետեւ բարձր բարբառով սաղմոսիւք և երգօք հոգեւորօք . . . յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանել»<sup>1</sup>. մի սրտաշարժ նկարագիր, որով սուրբ Նղիշէն հանում է մեր առաջ երկու գիտելիք, մին որ, թէ հինգերորդ դարի հայերը և այլ քրիստոնեայ ազգեր անգամ իրենց վշամբեր նեղասկրութեան ժամանակ՝ Բարխիոն տարագրուած Ռարայէլացի ժողովրդոց պէս, որպիսի յարգանք և սէր էին տածում գէպի իրենց մայրենի Նկեղեցին ու նրա սրբազան երգերը) և միւս ևս, թէ այդ երգերը ինչ անունով էին յաւերժացած մեր Նկեղեցւոյ մէջ հինգերորդ դարում:

Արդ՝ յիշեալ հատուածում սուրբ Նղիշէի յառաջ բերած «Հոգեւոր երգօք» խօսքերը առանց խեղաթիւրելու և շիթելու սաղմոսների հետ մանաւանդ որ նոքա նոյն հատուածում արդէն իրենց նշանակութեան համաձայն գրուած են պարզօրէն, առանց տատամսելու պէտք է հասկանալ շարականներ:

Այսպէս էլ սաղմոս բառի հետ անբաժան գրուած էրէք և հոգեւոր էրէք խօսքերը մենք ոչ միայն կարգում ենք հինգերորդ դարի այլ և այլ մատենագրութեանց մէջ<sup>1</sup>, այլև տեսնում ենք ճիշտ Նղիշէի յառաջ բերած նկարագրի նման կամ նրանից իմաստով տարբեր վեցերորդից մինչև մետասաներորդ դարերի պատմութեանց գեղեցիկ էջերի մէջ, որոնք ոչ այլ ինչ են նշանակում, եթէ ոչ դարձեալ շարական<sup>2</sup>. որից կհետեւի թէ շարականները

դեռ ևս հինգերորդ դարից մինչև մետասաներորդ դարը ծանօթ էին մեր ազգին ու նրա պերճախօս մատենագիրներին միմիայն Հոգեւոր էրէք կոչումով, իսկ այն մատենանր ուր դաս առ դաս գանձուած են նոքա «Նրգարան» հոգեկից Մատեան և Բուրաստան» անուններով ինչպէս որ այդ սրբատառ անուններն ևս յաճախակի տեսնում ենք թէ հին և թէ նորագոյն դարերի շատ ձեռագիր Շարականների յիշատակարանների մէջ<sup>3</sup>:

Բայց և այնպէս յիշեալ դարերում՝ թէ եկեղեցական ժամակարգութեանց մէջ, թէ մասնաւոր թղթերում և թէ պատմութեանց էջերում՝ յաջորդաբար գործ դրուած էրէք խօսքը, ունէր արդեօք շարական պարզ անուն իմաստը, կամ Հոգեւոր էրէք ասելով, շարականներն էին հասկացուում: Այս երկու՝ եթէ կարելի է այսպէս ասել, մթին խօսքերի բացատրութիւնն ևս բնծայում են մեզ հետագայ երկու արժանահաւատ անձինք, իրենց գրութեան մէջ էրէք բառին իբրև բացայայտիչ կըցելով անուես շարական իսկ հոգեւոր էրէք խօսքերին՝ շարական ըստ այսմ:

Յրկոտասաներորդ դարում Հաղբատեցի վանականները ի նկատի ունենալով Գրիգոր Տղայ կաթողիկոսի՝ միաբանութեան և սիրոյ պատճառաւ առանց իրենց գիտութեան յունաց գրած մի քանի թղթերը վասնորոյ և կարծիք տանելով որ նա իբրև ջերմեռանդ ջատագով է յունագաւանութեան, այս իսկ պատճառաւ գրում են կրօնասէր Հայրապետին բաւականին համարձակ լեզուով մի թուղթ: Գրիգորը կարգալով այս երզնիական նամակը, յուզուած սրտով գրում է նրանց մի երկարաձիգ գեղեցիկ պատասխան, ուր ի միջի այլոց յառաջ բերելով յունաց ընդունած մի քանի զարտուղի պաշտամունքները, ասում է, — «Եւ այսր ամենայնի հակառակ և գիմամարտ ես էի յառաջն, և իմն գրով և բանիւ հազիւ ուրեմն ածի յայդ . . . և վկայեցին՝ եթէ ծանեաք յ'էրէք՝ ձեր և օրհնութիւնս՝ որ է շարական որ առ աստուած հաւատոյ ձերոյ ուղղափառ դաւանութիւն», իսկ իւր մասին

) Ազգար Փար 1891. Վենետիկ. 22. Պորիւն. 1833. Վենետիկ. 23. 25. 27. 2) Սերէոս. գլ. ԻԹ. Ղևոնք պատ. գլ. Է. Յով. կթ. 1853. Մոսկուա. 73. Ուստանէս. բ. հատոր. գլ. ԼԹ. Արիստակէս Աստ. գլ. ԺԱ. 5) 2եռ. Շար. ս. Աթոռոյս № 1606—Լե. թղ. 415: № 1613—Խր. թղ. 325: № 1615—Խր. թղ. 205:

յայանում է վշտապէս « Ռբանս նոցա ոչ կապեցաք փառասէր և անձնիշխան կամօք՝ որպէս կարծեցիք » 1 :

Ըստ այսմ և ժԳ-րդ դարում ապրող պատմարան Կիրակոս Գանձակեցին խօսելով Սիւնեաց իմաստասէր Ստեփաննոս եպիսկոպոսի գրական բազմաթիւ աշխատութիւնների մասին ի գովեստ այս բազմաբղիւն հայ եկեղեցւոյ մշակի՝ աւելայնում է. — « Արար և երգէ հոգիւն » քաղցր եղանակաւ շարունակելով » 2 :

Ուրեմն սկսած Ե-րդ դարից մինչև ժԱ-րդ դարը մեր մատենագրները իրենց երկասիրութեան ժամանակ երբ աչքի առած են ունեցել միմիայն շարականները և խօսել նրանց մասին, ըստ աեղւոյն և ըստ յարմարութեան անուանել են նրանց իրենց հոգեպարար երկերի մէջ հոգեպարար երգ կամ սոսկ երգ. իսկ անցնելով այդ դարերը երբ մտնում ենք ժԲ և ժԳ-րդ դարերի մէջ, ուր երևան է գալիս անունս Երգչական, այդ դարերում գրուած պատմութեանց, զանազան թղթերի և յիշատակարանների մէջ գրեթէ մենք շատ քիչ ենք կարգում հոգեպարար երգ կամ երգ, այլ Երգչական որ փոխաբերական մտքով նշանակում է Հոգեպարար երգ, և Երգչական որ նշանակում է այն անգին Գիրքը, որի մէջ զետեղուած են կենդանարար հոգևոր երգերը :

Թէ ո՞վ է եղել այս գեղեցիկ բառի հեղինակը ի՞նչ բառից է նա կազմուած, և որ դարումն է երգի մտքով մտաք գտել մեր լեզուի մէջ, այս մասին աւելորդ չենք համարում յառաջ բերել և մեր հետազօտութեան պըտուղները :

Հնադոյն ձեռագիր Շարականների մէջ դարերի կարգով մի առ մի ուշ դարձնելով շարականների խորագրների վերայ, մեր աչքի դէմ են դուրս գալիս Կանոն, Օրհնութիւն, Կարգ, Երգ և Շարական :

ԿԱՆՈՆ՝ մեր ձեռքում գտնուած 1588—ժ է Շարականի մէջ իբրև անդրանիկ խորագիր, գրուած է առաջին անգամ սուրբ Սահակի

և սուրբ Մեսրոպի գրած շարականների ձևկատին, ըստ այսմ « Կանոն զազարու Յարութեան—Այսաւր գոյով ի բեթանիա » « Կանոն, Ապաշխարութեան—Որ հայիս » որոնք և գրուած են կրճատ ձևով թղ. 100<sup>1</sup> և 70<sup>2</sup> :

Շարականիս մէջ Կանոն և Կարգ համազօր խորագրերը գործ են գրուած միայն այն ժամանակ, երբ ամբողջովին կամ պակաս՝ կան իրենց տակին օրուան տօնի պատշաճի շարականները, այսինքն, Օրհնութիւն, Հարց, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր յերկնից, Մանկունք, Ճաշու և Համբարձի, որոնք ամենքը մէկ տեղ առած, ազու անուամբ կոչուում են ՊԱՏԿԵՐԻ Եւ հայ եկեղեցւոյ օրէնքների նախանձանդիր զաւակները—միւս շարական գրողները, առանց շեղուելու ս. Սահակի և Մեսրոպի վաղօրօք գծած այս ձևից ու սահմանից, գրել են անփոփոխ և իրենց գրուածների ձևկատին ԿԱՆՈՆ՝ եթէ միայն կան նոցա տակ լիովին կամ պակաս յիշեալ երգերը, ճիշտ այնպէս ինչպէս մեր մատենագրներից շատերը իրենցից առաջ գրուած ժամանակի անցքերը շատ անգամ բառացի քաղում են այս և այն մատենագրներից, կամ սկսում իրենց պատմութիւնը նոցա արած նախահայր Ազամից :

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ՝ իբրև անդրանիկ խորագիր առաջին անգամ գրուած է Ա-րդ դարում ապրող Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսի գրած՝ Յարութեան ութին ձայն կրճատ ձևով գրուած Օրհնութիւնների վերայ, ըստ այսմ « Աւրհնութիւնք, Յարութեան տն » :

« Օրհնութիւն » խորագրով շարական բնաւ չունենք, և եթէ մի քանի տերունական և այլ տօնների շարականների վերայ տարապարտ տեղ գրուած են, այդ ևս գրուած է Կանոն և Կարգ խորագրերից յետոյ և կետով (•) բաժանուած, որ մեզ թուում է թէ յետին գրիչներից յաւելացած պիտի լինին, զօ. « Կանոն Մբոց հախիսիմեանցն, Աւրհնութիւն » « Կարգ Եւթանասուն, եւ. բ. Առաքելոյն, Աւրհնութիւն » թղ. 164<sup>1</sup>. 42<sup>2</sup> :

ԿԱՐԳ, իբրև անդրանիկ խորագիր առաջին անգամ գրուած է ժԱ-րդ դարում ապրող

1) Ընդհանրական. 1865 էջմ. 436—448. 2) Կիրակոս. 1865. Վեճա. 40.

Պետրոս զետադարձ կաթուղիկոսի գրած Մարտիրոսայ՝ ուխն ձայն կրճատ ձևով գրուած շարականների վրայ, ըստ այսմ:— «Կարգ Համաւրէն. Սուրբ. Մարտիրոսացն»:

«Կարգ» իբրև խորագիր, Շարականիս մէջ յիշուած է միայն երկու տեղ և գրուած յիշեալ Եօթանասուն և երկու առաքելոց «Իմաստուն՝ երկնային» օրհնութեան և Գրիգոր լուսաւորչի «Սոսկալի տեսիլ» բաց ձևով գրուած նոր շարականների վերայ:

Եթի, իբրև անդրանիկ խորագիր գրուած է միմիայն «Ներսէս շնորհալի հայրապետի» բաց ձևով գրուած բոլոր երգերի վերայ, որպիսիքն են, Արևազալից երգեր, «Այսօր անձառ», «Նորաստեղծեալ», «Սպեաց սիրով» ևն:

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ, իբրև անգրանիկ խորագիր առաջին անգամ մեր Շարականի մէջ երեւում է Յինանց՝ կրճատ ձևով մէկը միւսի ետեւից գրուած վեց հատ Գովեանների վերայ, ըստ այսմ:— «Գովեայք, Շարականաց, յինանցըն», որոնցից յեա՝ «Կանոն» խորագրով գալիս են Յարութեան ուխն ձայն Հարցերը, Մեծացուցեքը, Ողորմէքը և Տէր յերկնիցները:

Այս գերիմաստ երգերը՝ բացի Մեծացուցեքներից, ըստ վկայութեան մեր Շարականի Գրչի գրել է Ըրդ դարում ապրող հանձարեղ Անանիա Շիրակացին, սակայն ցաւալի է որ Նա ի թիւս միւս շարականների իւր Յուցակի մէջ չէ յիշատակում պարզօրէն, թէ յիշեալ Գովեաններն ևս Շիրակացին է գրել թէ ոչ, բայց և այնպէս իւր գրութեան մէջ զորձածած քառուկ բառից և բոլոր շարականների գատաւորութեան ձևից, կարծում ենք հասկանալի կլինի որ արդարև ոչ ոք չէ գրեր բացի Անանիայից:— «Զարութեան Կարգն բաւանդակ. զհարցներն և զողորմէքն. և զտր յերկնիցներն Անանիայ շիրակացին ասաց» թղ. 222:

Կիրակոս Գանձակեցին յիշեալ Գովեաններից թէև երկու հատ ընծայում է Ներսէս Շնորհալուն 1, սակայն ինչպէս մեր նախընթաց

յօդուածով յայտնեցինք, մեր Շարականի Գրիչը իբրև Ներսէսին ժամանակով մերձաւոր անձն, գրում է Նրա գրածները բաց ձևով և նոր է անուանում նրանց իւր Տօնացուցում, մինչև դեռ այդ Գովեայքը իբրև հնագոյն շարական՝ գրուած են կրճատ: Այսպէս էլ Վեներակի ուխտի բազմարդիւն վարդապետներից մինն— Հայր Գարբրիէլ Աւետիքեան՝ հիմնուելով Կիրակոսին աշակերտակից Վարդան Բարձրաբերդու և անյայտ պատմիչների տուած վկայութեանց վերայ, Յարութեան շարականների մի մասը ընծայում է Մովսէս Խորենացուն և միւս մասը Ճոն Բարսղին 1, սակայն ուրիշ Շարականի Գրիչներ այնպէս են ձանաչում Մովսէսին և թուում նրա գրածները, որպէս թէ տես ու ձանաչ լինէին Նրան:

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ, իբրև մի ուրիշից փոխ առած խորագիր մենք տեսնում ենք՝ մէկը միւսի ետեւից կրճատ ձևով միտեղ գրուած՝ Կուսին Սանդրևոյ, Կիրակոսի և Յուզիտեայ, Սուքիասեանց, Վահանայ Գողթնեցու, Ատմեանց, Ոսկեանց, Գաւթի Գունեցու, Վարդանանց և Ղևոնդեանց՝ ինն հատ աննման Մանկունքների վերայ, որոնք ըստ անորոշ վկայութեան տպագիր Շարականի ցանկի «և զբազումս ի մանկտեանցն», և արժանահաւատ նորագոյն պատմիչների գրել է ԺՒրդ դարում Անի քաղաքի փառքը և նրա եղծմունքը իւր աչքով տեսնող Պետրոս զետադարձ Հայրապետը 2:

Ի շարունակութիւն այս մանկունքների՝ մէկը միւսի ետեւից բաց ձևով գրուած են նաև Գէորգայ զօրավարի 3, Մեծին Ներսէսի, Սա-

1) Բացատրութիւն Հարականաց. 1814, Վենտ 285, 2) Չամ Բ. հատոր. գլ. Լե. 836, Բացատ. Հար. 576, Այս Մանկունքների կարգից միայն Կոյս Սանդրևոյն է առանձին երեսում գրուած, Գողթնեցու Մանկունքը աւանդութիւնն ընծայում է իւր եղբայրասէր քրոջը, 3) Տես Կոյս Սանդրևոյ մասին գրած ծանօթութիւնը, Զօրավարիս Մանկունքը տպագիր Հարականների մէջ գրուած է Մարտիրոսաց 7: շարականների մէջ և որպէս զի ընթերցողը նրա հեղինակի մասին չսխալուի, հարկ ենք համարում յիշեցնել, որ նա Գետադարձի գրածը չէ և որպէս Զօրավարիս Մանկունքի՝ այսպէս էլ մնացածների հեղինակների մասին կիսօսենք իւր տեղում:

1) Կիրակ. 68:

Հակայ, Համամայ, Բարադի, Եփրեմի, Ոսկերե-  
րանի, Գրիգոր աստուածարանի, Իգնատիոսի,  
Կիւրդի, Յովհաննու Հայրապետի, Պարսամայ,  
Տարազոսեանց, Եւստափոսեանց, Երկուց  
Բիւրուց, Աղջուց սուրբ Ստեփաննոսի, Ստե-  
փաննոսի Ուշեցու, Յովհաննու առաքելոյն և  
Սաննու, Կիւրդայոսի Հայրապետի, Կիրակո-  
սի և Յուզիտեայ—«Վարդազդն վառեալ», և  
«Յայս յարկ նուիրանաց» քան և մի հաս-  
ժի և ժԳ-րդ զարերում գրուած զեղեցիկ  
Մանուկներէ վերայ:

ՍԱՆՉԱՆՆԵՐ

(Հարունակելի :



ՄԱՆԿԱԿԱՆ ԴԱՐՏԷԶ

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆ

ԸՆԴՉԱՆՈՒՐ ՅԱՌԱՋԱԲԱՆ:



րէօրէլեան մանկական  
պարտէզը սովորական  
ուսումնարաններէ նման  
մի ուսումնարան չէ, ուր  
երեխաներ ընդունելուց  
յետոյ, իսկոյն սկսում են  
սովորցնել գրել: կարգալ

և դրանից յետոյ զիտուծիւններ աւանդել: Դա  
մի այնպիսի ուսումնարան է, ուր ընդունելով  
չորս տարեկան մանուկին, ամենից առաջ սկը-  
սում են համահասար զարգացնել նրա բո-  
լոր ընդունակութիւնները առանց մի որ և է  
ձանձրութիւն պատճառելու նրան և տալիս են  
նրա հասակին համապատասխան ամենայն տե-  
սակ նպատակադրմար զուսուծութիւններ:

Մարմնամարդութիւնը գլխաւոր առարկա-  
ներից մէկն է, որ կատարուում է զանազան  
զուարճալի բայց կանոնաւորուած խաղերով:  
Խաղը մեծ դեր է կատարում մանկական պար-  
տիզում, որովհետեւ խաղը և առհասարակ շար-  
ժողութիւնը երեխայի համար բնական պար-

հանջներ են, որոնցից նրան չի կարելի զրկել:  
այլ նաև պէտք է օգնել նրան խաղալու և  
շարժողութիւններ անելու համար: Մանկական  
պարտիզի խաղերը և շարժողութիւնները բոլոր-  
ըն էլ յարմարեցրած են երեխայի մարմնի  
և նրա զանազան ընդունակութիւնների զար-  
գացման համար:

Խաղը երեխայի համար բնական պահանջ  
է, որովհետեւ նա խաղալով աշխատում է իր  
թոյլ մարմինն ամրացնել և շարժողութեանց  
մէջ փորձուել: Կոյն ձգտումն էլ ունին բո-  
լոր անասունների մատաղահաս ձագերը:

Մանկական պարտէզը խաղերով, երգերով,  
փոքրիկ և զուարճալի պատմութիւններով ե-  
րեխաների համար զիւրրմբունելի հետաքրքիր  
եղանակներով ծանօթացնում է նրանց զանա-  
զան զիտուծիւնների հետ, սովորցնում է կա-  
նոնաւոր խօսելու, պատմելու ձևերը, կանոնա-  
ւորում է և ուղղութիւն է տալիս նրանց ձրգ-  
տումներին և բնագլմանցը (որոնք յաճախ բը-  
նականապէս լինում են վայրենաբարոյ, որոնք  
կարող են յետոյ հասարակութեան համար վը-  
նասակալ լինել), սովորցնում է իրազնու-  
թեան, աշխատասիրութեան, ինքնուրոյնու-  
թեան, հնարագիտութեան, կարգապահու-  
թեան:

Կրօնը առաջին տեղն է բռնում այդ ու-  
սումնարանում: Բոլոր զիտնական մանկավարժ-  
ները, որոնք Ֆրէօրէլից առաջ աշխատել են  
մանկական պարտիզի իրագործման համար և  
ինքը Ֆրէօրէլը միաձայն պնդում են, որ ան-  
հրաժեշտ է հենց սկզբից ներմուծել մանուկ-  
ների հոգու մէջ աստուածային օրէնքները  
կրթել նրանց այդ օրէնքներին համաձայն:  
Այդ նպատակին հասնելու համար մանուկնե-  
րին ծանօթացնում են բնութեան և դրա օ-  
րէնքների հետ, որոնք նախասահմանուած են  
Աստուծուց, ինչպէս և ինքը մանուկը, ստեղծ-  
ուած է Աստուծուց: Ո՛նչ մարդկային լեզու  
կարող է այն անսակ ակներև և հասկանալի  
կերպիւ բացատրել Աստուծոյ զոյութիւնն,  
էութիւնը, մեծութիւնը, մշտնջենաւորութիւ-  
նը՝ քան ինքը բնութիւնը, որ Աստուած է